# ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁ

## ԱՐԱՐԱՏ ԽՈՇՈՐԱՑՎԱԾ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՍԼԱՆ ԱՎԵՏԻՍՅԱՆԻ՝ ՀՀ ՔԱՂԱՔԱՑՈՒ ՕՐՎԱ ԱՌԹԻՎ

Արարատ համայնքի սիրելի՛ բնակիչներ,
ջերմորեն շնորհավորում եմ բոլորիս այս կարևոր տոնի՝ ՀՀ Քաղաքացու օրվա առթիվ:

Այսօր էլ հստակ գիտեկցելով այս օրվա խորհուրդը՝ համերաշխությունն ու միասնականությունը, պետք է առաջ շարժվենք՝ արժանապատիվ և բարեկեցիկ երկիր կառուցելու ճանապարհով, որտեղ մեզանից յուրաքանչյուրը պետք է ունենա իր դերակատարումը և ներդրումը:

Մենք պետք է գիտակցենք, որ մեր բոլոր նախաձեռնություններում և կյանքի կոչված գաղափարների իրականացման ճանապարհին կհաջողենք միայն այն դեպքում, երբ միասնական ջանքերով, հանուն պետության առաջընթացի աշխատենք և առաջ շարժվենք՝ չընկճվելով մեր առջև ծառացած դժվարություններից:

Եվս մեկ անգամ շնորհավորում եմ բոլորիս այս կարևոր օրվա առթիվ՝ մաղթելով մեր երկրին անխախտ խաղաղություն, լավատեսություն և բարեկեցություն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԱՍԼԱՆ ԱՎԵՏԻՍՅԱՆ